

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋԱՀԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,

ՀԱԱՀ, ԳՊՀ դասախոս
Էլփոստ՝ pahal@mail.ru

ՓԱՀԱՎԱՌԻ ԱՐՄԵՆ

HSBC բանկի կառավարիչ

Էլփոստ՝ armen.pahlavuni@hsbc.com

Հոդվածում ներկայացված են այն մեխանիզմները, որոնք օգտագործվում են այն երկրներում, որոնց գրածաշրջանային սոցիալ-գնուքական զարգացման կառավարման փորձը ամենամեծ հետաքրքրությունն է ներկայացնում: Այս մեխանիզմները կարող են նաև օգտակար կիրառություններ ունենալ Հայաստանի Հանրապետությունում: Մասնավորապես Եվրամիության առաջադեմ պետությունների (Ֆրանսիա, Գերմանիա) փորձը ընդունելի է առանձին երկրների, ինչպես նաև հետացցիալիստրական երկրների (Չինիա, Բուլղարիա, Լեհաստան) և Խորհրդային Միության (Ռուսաստանի Դաշնություն, Լատվիա) նախկին հանրապետությունների անհավասար զարգացումը վերացնելու գործում: Նրանց փորձը Հայաստանի համար ընդունելի է նաև նրանով, որ այս երկրներում կենքրոնացված և գեղական ինքնակառավարումը կարգավորվում է նույն մեթոդներով, ինչ ՀՀ-ում:

Բանալի բառեր՝ Տարածքային կառավարում, սոցիալ-գնուքական զարգացում, գրածաշրջանային քաղաքականություն:

Համաշխարհային տնտեսագիտության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տարածքային զարգացման հիմնախնդիրները եղել և մնում են խիստ արդիական, քանզի ցանկացած երկրի համար արտաքին տնտեսական կապերի զարգացումից բացի առավել մեծ սոցիալ-տնտեսական նշանակություն ունի տարածաշրջանային համաշափ զարգացումը: Այդ հիմնախնդիրները լուծված չեն նույնիսկ տնտեսապես զարգացած երկրներում:

Այսպես, Եվրամիությունը, լինելով բարեկեցության բարձր մակարդակ ունեցող երկրների համագործակցություն, տարածքային քաղաքականությունը համարում է ուազմավարական քաղաքականության հիմնական բաղա-

դրիչներից մեկը և այն իրականացնում է առաջնահերթ քայլերի շարժով՝ նախ աջակցելով տնտեսապես ավելի թույլ զարգացած տարածաշրջաններին և այդ աջակցությունը զուգորդելով տվյալ երկրի կողմից համապատասխան քայլերի իրականացմամբ¹:

Տարածքային անհամաշափ զարգացումը կանխելու և հետամնաց շրջաններին աջակցելու նպատակով Եվրամիության կողմից ստեղծվել և գործում են մի շարք հիմնադրամներ²:

1. Եվրոպայի տարածքային զարգացման հիմնադրամ, որը հիմնականում ռեսուրսներն ուղղում է Ենթակառուցվածքներում ներդրումների իրականացմանը:

2. Եվրոպայի սոցիալական հիմնադրամ, որի գերխնդիրն է զբաղվել աշխարհի հետ կապված հիմնախնդիրների լուծման, աշխատանքային ռեսուրսների կառավարման, վերապատրաստման հարցերով:

3. Եվրոպայի գյուղատնտեսական կառավարման և երաշխավորման հիմնադրամ, որը աջակցում է գյուղատնտեսության կառուցվածքային բարեփոխումներին:

Եվրամիության համապարփակ բյուջեում տարածաշրջաններին օժանդակելու ֆոնդերը կազմել են ընդհանուր բյուջեի շուրջ 40 տոկոսը³:

Եվրամիության պետություններն ունեն տարածքային հիմնախնդիրների լուծմանն ուղղված իրենց սեփական ծրագրերը: Այսպես, Ֆրանսիայում գործում է սոցիալ-տնտեսական զարգացման հիմնադրամը, որը ֆինանսավորվում է պետական բյուջեից և դեկավարվում Ֆրանսիայի գանձապետարանի կողմից: Հիմնադրամի միջոցներն ուղղվում են հանրային և մասնավոր ընկերությունների ներդրումային ծրագրերի ֆինանսավորմանը⁴:

Ֆրանսիայի համար մշտապես հատկանշական է եղել տեղական կառավարման և ինքնակառավարման կենտրոնացվածության բարձր աստիճանը: Դա դրսևորվեց տեղական մարմինների նկատմամբ կենտրոնական իշխանության վարչական վերահսկողության համակարգի զարգացման, կենտրոնի և համայնքների փոխհարաբերությունների բյուրոկրատական են-

¹ Richardson, H.W., 1999, *Regional Economics: Location Theory, Urban Structure and Regional Change*, London:

² G. Gorrelak and Kuklinski (eds) *Dilemmas of Regional Policies in Eastern and Central Europe*, Warsaw: University of Warsaw, 1999.

³ <http://epp.eurostat.ec.europa.eu>

⁴ Horváth I.M. (1997) *Decentralization in public administration*

թակայության մեջ: Խնամակալող կենտրոնական իշխանության տրամադրության տակ էր միջոցների լայն տեսականի, որի նպատակն էր խստագույն իրեն ենթարկել տեղական իշխանությունների գործոնեությունը⁵:

Կառավարման համակարգի՝ նախկինում բնորոշ տարածաշրջանային բազմազանությունը վերացվեց, ստեղծվեցին դեպարտամենտներ, որոնք դեկավարվում էին կենտրոնական իշխանության՝ իրենց վերահսկմանը ենթակա տարածքների կառավարման ոլորտում լայն լիազորություններով օժտված ներկայացուցիչների կողմից: Այդ խիստ կենտրոնացված համակարգը ֆրանսիայում գոյատևեց շուրջ 200 տարի:

1982 թվականին իրականացված ապակենտրոնացումը (Մորուայի բարեփոխումներ) ընդլայնեց տարածքային իշխանությունների լիազորությունները, ապահովեց նրանց ավելի լայն ինքնուրույնություն սեփական հարցերը լուծելիս և միաժամանակ պահպանեց տեղերում կենտրոնական իշխանության ազդեցիկ դիրքերը: Իշխանության ապակենտրոնացված կառավարման նոր քաղաքականության իրագործման նպատակով 1983թ. ընդունվեցին կոմունաների, դեպարտամենտների, տարածաշրջանների և պետության իրավասությունների սահմանազատման մասին օրենքը և ֆինանսավորման աղբյուրների սահմանազատման մասին օրենքը: Հետագայաում այդ ակտերը լրացվեցին այլ օրենքներով և իրավական ակտերով, որոնք շոշափում են տարածաշրջանների կազմակերպման կառուցվածքի, տեղական կառավարչական աշխատակազմի, տեղական ընտրությունների անցկացման, միջտարածաշրջանային համագործակցության և իշխանության տեղական մարմինների գործոնեությանը քաղաքացիների մասնակցության հետ կապված հարցերը: Այսպիսով, տարածքային կառավարման ֆրանսիական մոդելի համար հատկանշական է կառավարության՝ ՏԻՄ-երի նկատմամբ վերահսկողություն իրականացնող հատուկ լիազորի առկայությունը, որը շատ դեպքերում բերում է հակասությունների կենտրոնի և տարածաշրջանների միջև:

Տարածքային զարգացման մոտեցման գերմանական մոդելը Եվրոպայում ամենաարդյունավետներից է: Կազմավորվել է 1990թ. Գերմանիայի վերամիավորման արդյունքում՝ նպատակ ունենալով լուծել անցումային փուլում ծագած սոցիալ-տնտեսական խնդիրները և հանդիսանալով անցումային ժամանակաշրջանի հայթահարման հիմնական լծակ: Համաշակ տարածքային զարգացման հասնելու նպատակով հողերի և համայնքների միջև

⁵ Managing across Levels of government: France, Oecd, 1997. Լթ 195-212.

ստեղծված են ուղղահայաց և հորիզոնական բաշխման ու վերաբաշխման բազմաթիվ գործիքներ⁶:

Արևելյան Եվրոպայում տարածքային անհամաչափ զարգացման հիմնախնդիրներն արդիական դարձան համակարգի փլուզումից հետո: Համարյա բոլոր երկրները, մեր հանրապետության նման ունեցան լիդեր տարածաշրջանները (Երևան), իսկ Չեխիայում՝ Պրահան, Սլովակիայում՝ Բրատիսլավան, Հունգարիայում՝ Բուդապեշտը և այլն:

Արևելյան Եվրոպայում ակնհայտ ընդգծված են ծայրամասերը, որոնք ճգվում են արևելյան սահմաններով: Անցումային գործընթացը շատ դանդաղ է իրականացվում այս տարածաշրջաններում, նրանք գրավիչ չեն օտարերկրյա ներդրողների համար և կրթական մակարդակը ցածր է: Այդ երկրների արևմտյան տարածքները դարձան բարեփոխման գործընթացների ամենահաջող օրինակները: Արագ հաղթահարեցին նախկին մեկուսացվածության բացասական ազդեցությունը զարգացած հարևանների՝ Գերմանիայի, Ավստրիայի հետ համագործակցության միջոցով:

«Արևմտյան գոտու» աշխարհագրական դիրքը մեծ առավելություններ է ընձեռնում⁷:

Հետոցիալիստական վերափոխման սկզբնական շրջանում Արևելյան Եվրոպայի պետությունների ազգային կառավարությունները (բացառությամբ Հունգարիայի) «տարածքային կառավարման հիմնախնդիրների» լուծումը թողել են «Չուկայական ուժերին»՝ թույլ չտալով իրենց երկրների նոր տնտեսական քարտեզները ծևավորել ըստ հատվածային գործընթացների: Սակայն սոցիալ-տնտեսական լուծում պահանջող խնդիրները ստիպեցին 1990-ական թվականների վերջերին բոլոր երկրներում մշակել և ընդունել տարածքային տնտեսական գործընթացների վերաբերյալ օրենսդրություններ:

Չեխիայում տարածքային քաղաքականության հիմնադրույթները ծևավորվեցին 1992-ին և միտված էին փոքր ու միջին ձեռնարկություններին տրամադրվող ֆինանսական աջակցության միջոցով: Օստրավա-Կարպինա ավագանի վերակառուցումը, որը աժսի արդյունահանման տարածաշրջան է, հետոցիալիստական տարածաշրջանի վերակառուցման օրինակ է:

⁶ Horvath G. (1995) The regional policy of the transition in Hungary, European Spatial Research and Policy.

⁷ Richardson, H. W., 1999 Regional Economics: Location Theory, Urban Structure and Regional Change, London.

Հոչակվեց, որ հանրային աղբյուրներից և ոչ մի լումա չպետք է ծախսվի ածխի հանքերի գործառական ծախսերի համար⁸:

Բովլարիայում սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման նպատակով, ընդունվել է կառավարության «Ռեգիոնալ զարգացման քաղաքականություն» ծրագիր, որը կոչված է մեջմելու տարածքային տարրերությունները՝ հավասարեցնելով հանրային ներդրումները, կիրառելով տարածքային բարեփոխման քաղաքականություն: Բովլարիայում 1989 թվականից հետո օրենսդրական բարեփոխումների միջոցով փորձ արվեց նվազեցնել տեղական մակարդակում կենտրոնական կառավարության ներգործությունը: Դրա համար հիմք հանդիսացավ «Տեղական ինքնակառավարման և տեղական կառավարման ակտը»: Սահմանադրության համաձայն՝ երկրի վարչական տարածքը բաժանված է համայնքների և տարածաշրջանների⁹: Այլ վարչատարածքային միավորներ են՝ ինքնակառավարման մարմիններ կարող են ստեղծվել օրենքով: Գոյություն ունի 9 տարածաշրջան: Դրանք վարչատարածքային միավորներ են, որոնք լիազորված են իրականացնել տարածաշրջանային քաղաքականություն, այսինքն՝ պետական կառավարման իրագործում տեղական մակարդակում, ինչպես նաև համակարգել ազգային ու տեղական շահերը¹⁰:

Յուրաքանչյուր տարածաշրջան ղեկավարում է տարածաշրջանային կառավարիչը, որը նշանակվում է նախարարների խորհրդի կողմից և ապահովում է պետության քաղաքականության իրականացումը, ազգային շահերի անվտանգությունը, օրենքի և հասարակական կարգի պահպանությունը, վարչական վերահսկողությունը:

Պետության կենտրոնական մարմինները և նրանց տեղական ներկայացուցիչները վերահսկողություն են իրականացնում ՏԻՄ-երի ակտերի օրինականության նկատմամբ միայն օրենքով թույլատրված դեպքերում: Բովլարիայում համայնքները վարչատարածքային այն հիմնական միավորներն են, որոնց մակարդակում իրականացվում է ինքնակառավարում: Համայնքներն իրավաբանական անձ են և ազատ են համայնքի ընդհանուր գործերին մասնակցելու առումով:

⁸ Kara, J. (2000) "New regional policy"

⁹ Համայնքային ծառայության հիմունքներ, Ռուսումնական ծխոնարկ, Ե. Օրովանի Խմբ. «Օր-դար», Երևան, 2009, լ. 47:

¹⁰ Public management profile of Central and Eastern European countries Bulgaria, OI CD, SIGMA, 1999: Էջ 16-22.

Լեհաստանը, լինելով շոկային թերապիայի իրականացման առաջատարներից մեկը, անցում կատարեց վարչահրամայական տնտեսական համակարգից շոկայականին՝ միաժամանակ ձեռնամուխ լինելով վարչատարածքային կառուցվածքի բարեփոխումներին: 1989-1990 թվականների լեհական կառավարության վերակառուցման ողջ ընթացքում պետական իշխանության մարմինների վարչական բարեփոխումների ուղղությամբ աշխատանքները շարունակվում էին: Այդ նպատակով փոփոխվեց դեռևս 1975 թվականից գործող երկրի տարածքային բաժանումը (երկիրը բաժանված էր 49 վոյենոդության և շուրջ 2500 համայնքի): Բարեփոխումները նախատեսում էին նախ՝ կրճատել վոյենոդությունների թիվը, որոնք չափազանց շատ էին ապակենտրոնացված պետության համար, և, երկրորդ՝ հիմնադրել իշխանության տեղական մարմինների համայնքները:

Լեհաստանի Սեյմի որոշման համաձայն՝ երկիրը 1990 թվականի հունվարի 1-ի դրությամբ վարչականորեն բաժանվեց 16 վոյենոդության և 373 օկրուգի, ներառյալ 65 քաղաքային օկրուգները: Միաժամանակ լուծարվեցին 268 տարածքային ներկայացուցությունները, և դրանց գործառույթների մեծ մասը փոխանցվեց նոր օկրուգներին¹¹:

Լեհաստանում իրականացված վարչատարածքային բարեփոխումների արդյունքում տեղի ունեցավ կառավարման ապակենտրոնացում, և հնարավորություն ընձեռնվեց հետագայում խոաափել ֆինանսական միջոցների փոշիացումից և նախադրյաներ ստեղծել տարածաշրջանային անհամաշափ զարգացման մակարդակների մերձեցմանը:

Տարածքային կառավարման միջազգային փորձը համակողմանի կերպով ներկայացնելու համար, մեր կարծիքով, չպետք է բավարարվել կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, մասնավորապես Ֆրանսիայի, Գերմանիայի և մի շարք նախկին սոցիալիստական երկրների փորձով, այլ նաև դուրս գալ այդ շրջանակներից, որոշակի չափով ներկայացնել հյուսիսային Եվրոպայից՝ Նորվեգիայի, նախկին ԽՍՀՄ մի քանի երկրների՝ ՌԴ-ի, Լիտվայի, տարածքային կառավարման փորձը:

Այսպես, Նորվեգիան՝ որպես համեմատաբար մեծ տարածքով և փոքր ազգաբնակչությամբ երկիր, ոնի կառավարման երկու համակարգ՝ կենտրոնական և տեղական: Վերջինս իր հերթին բաղկացած է երկու առանձին

¹¹ Է. Օրյան, «Ապակենտրոնացում», Հայեցակարգային հիմնադրույթներ, «Օր-դար», Երևան, 2007, լ. 30:

ինքնակառավարման համակարգից՝ 435 համայնքից և համայնքների 10 միությունից¹²: Այդ երկու համայնքները միմյանց նկատմամբ աստիճանակարգային որևէ կախվածություն չունեն: Նորվեգիայում տեղական ինքնակառավարումը ամրագրված չէ սահմանադրությամբ և կարգավորվում է միայն իրավական ակտերով:

Կենտրոնական կառավարության կողմից համայնքների միությունում նշանակվում է կառավարիչ, որն էլ իրականացնում է տվյալ համայնքային միության կառավարումը: Կառավարչի լիազորությունները սահմանափակում են օրենքների, իրավական ակտերի և բյուջետավորման սահմանված գործընթացի հետ ՏԻՄ-երի գործունեության համապատասխանության ապահովմամբ:

Նորվեգական տեղական ինքնակառավարման առանձնահատկություններից է այն, որ ոչ սահմանադրությամբ, ոչ էլ հստակ իրավական ակտերով սահմանված չէ յուրաքանչյուր մակարդակի կողմից իրականացվող գործառույթները: Դրանք հստակեցվում են կողմերի միջև բանակցությունների արդյունքում՝ ենթակա տվյալ իրավիճակներից և կոնկրետ առանձնահատկություններից:

«Տեղական ինքնակառավարման ակտը» համայնքների աշխատանքային հարաբերություններում ապահովում է երկու իմանական սկզբունք՝

- 1) համայնքները կարող են հանդես գալ որպես գործառուներ,
- 2) իրականացնել ծառայողների ներգրավման աշխատանքներ:

Նորվեգիայում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողները կառավարվում են երկու տարբեր օրենքներով: Կառավարման կենտրոնական մարմինների աշխատանքը կարգավորվում է կառավարման նախարարությունների կողմից, իսկ համայնքային ծառայողների համար՝ «Տեղական և տարածքային իշխանությունների ասոցացիայի» կողմից:

Ռուսաստանի Դաշնության օրենսդրության և հանրային կառավարման համակարգի համար համայնքային ծառայության հասկացությունը համեմատաբար նոր երևույթ է, նրա բովանդակությունը, տեսակները և սկզբունքներն անմիջականորեն կապված են տեղական ինքնակառավարման, դրա համակարգի մարմինների և օրենսդրական ամրագրման հետ:

¹² Managing across levels of government: Norway, OI CD, 1997, I, 363-374:

1993 թվականին ՌԴ Սահմանադրությամբ ամրագրվեց, որ ՏԻՄ-երը չեն մտնում պետական իշխանության մարմինների համակարգի մեջ, իսկ 1995թ. «Պետական ծառայության հիմունքների մասին» ՌԴ օրենքով առանձնացվեց պետական ծառայությունը՝ որպես մասնագիտական գործունեություն՝ ուղղված պետական մարմինների լիազորությունների իրականացման ապահովմանը: Ռուսաստանում համայնքային ծառայության իրավական հիմքեր են հանդիսանում «ՌԴ համայնքային ծառայության հիմունքների մասին» օրենքը և այդ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին դաշնային օրենքը (1999թ) և «Համայնքային ծառայության մասին» ՌԴ դաշնային օրենքը (2007թ):

Համայնքային ծառայությունների ֆինանսավորումն իրականացվում է տեղական բյուջեների միջոցների հաշվին:

Լիտվայում 1992թ. սահմանադրությամբ ծևավորվեցին բարձրագույն մակարդակի վարչական միավորներ, որոնք կազմակերպվում և ղեկավարվում են կառավարության կողմից, կոչված են հետևելու սահմանադրության և օրենքների պահանջների կատարմանը տեղական ինքնակառավարման մակարդակում:

Լիտվայում «Տարածքային կառավարման միավորների մասին» օրենքով ստեղծվեց 10 բարձրագույն վարչական միավոր, որոնք կոչվեցին կոմսություններ: Դրանք ղեկավարվում են կառավարչի կողմից, որին նշանակում և ազատում է կենտրոնական կառավարությունը վարչապետի երաշխավորությամբ: Կառավարչի հիմնական խնդիրներն են պետական քաղաքականության իրականացումը սոցիալական ապահովության, կրթության, առողջապահության, մշակույթի, տարածքային ծրագրավորման, գյուղատնտեսական հողերի և շրջակա միջավայրի պահպանության և մի շարք այլ բնագավառներում զարգացման ծրագրերի մշակումն ու իրականացումը:

1999 թվականին Լիտվան վավերացրեց Տեղական ինքնակառավարման մասին Եվրոպական խարտիան և պարտավորվեց հետևել ամրագրված դրույթներին, որոնք ել դարձան Լիտվայի իրավական համակարգի մի մասը:

Լիտվայի տեղական ինքնակառավարումը ներառում է.

- ընտրված ներկայացուցչական մարմինը՝ համայնքային խորհուրդը,
- գործադիր ինստիտուտները՝ համայնքապետը կամ համայնքային գործադիր խորհուրդը,
- վերահսկիչ տեղակամ մարմինը;

Հիտվիայում համայնքային խորհուրդն ընտրում է համայնքապետին երեք տարի ժամկետով:

Այստեղ քաղաքացիական ծառայողները բաժանվում են չորս մակարդակի՝ A, B, C, D¹³: Բարձրագույն կրթություն ունենալը պարտադիր է միայն A մակարդակի համար, իսկ D մակարդակի քաղծառայողների համար նույնիսկ միջնակարգ կրթությունը պարտադիր չէ:

Այսպիսով, սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից վերլուծելով տարբեր երկրների տարածաշրջանային զարգացման և տարածքային կառավարման փորձը, կարելի է հանգել որոշակի եզրահանգումների:

Նախ՝ ինչ վերաբերում է տարածքային զարգացման անհամաշափությանը, ապա հարց է առաջանում.

ա) արդյո՞ք երկրները կարիք ունեն և պետք է ռեսուրսներ ծախսեն՝ նվազեցնելու տարածքային զարգացման միջև առկա տարբերությունները վերացնելու ձգումով,

բ) կարո՞ղ են այդ երկրները կառուցել ժամանակակից մրցունակ տնտեսություններ, որը մեխանիկորեն կիանգեցնի տարածքային զարգացման անհամամասնությունների վերացմանը;

Երկրորդ՝ ինչ ընդհանրություններ և առանձնահատկություններ կան ուսումնասիրվող երկրների տարածքային կառավարման համակարգերում և ինչքանով են դրանք ընդունելի Հայաստանի Հանրապետության համար:

Տարբեր երկրների փորձի ուսումնասիրության արդյունքում տեղական ինքնակառավարման առանձնահատկությունների և համայնքային ծառայության համակարգերի միջև գոյություն ունի որոշակի համամասնություն, ապակենտրոնացման բարձր աստիճան ունեցող երկրները (Գերմանիա, Նորվեգիա) հիմնականում ունեն հանրային ծառայության այնպիսի համակարգ, որտեղ համայնքներում ներգրավված հանրային ծառայողների գործունեությունը տարբերվում է կառավարման մյուս մակարդակների գործունեությունից և կանոնակարգվում է իրավական ակտերով:

Այն երկրներում, իիմնականում նախկին սոցիալիստական երկրներում, որտեղ ապակենտրոնացման աստիճանը գտնվում է համեմատաբար ցածր մակարդակի վրա, կարգավորվում է նոյն իրավական ակտերով:

¹³ Public management profiles of central and Eastern European countries: Lithuania, OI SD, SIGMA, 1999, I, 19-20:

Տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության տարբեր երկրների համակարգերի ուսումնասիրությունները բերում են կոնկրետ եզրակացության, համաձայն որի բոլոր երկրներում համայնքային ծառայությունը կազմում է հանրային ծառայության մի մասը և գործում է հիմնական երեք մոդելներից որևէ մեկի ձևով.

- 1) համայնքային ծառայություն, որը տարանջատված է պետական հատվածի հանրային ծառայության համակարգից,
- 2) համայնքային ծառայություն, որն ինտեգրված է պետական հատվածում իրականացվող հանրային ծառայության հետ,
- 3) համայնքային ծառայություն, որտեղ կառավարման բոլոր մակարդակների հանրային ծառայուղները դասակարգվում են նաև ըստ մասնագիտությունների:

Ապակենտրոնացման բարձր մակարդակ ունեցող երկրներում ընդգծված են կառավարման կենտրոնական և տեղական մակարդակներում իրականացվող հանրային ծառայության տարբերությունները, որոնք հիմնականում կարգավորվում են տարբեր իրավական ակտերով: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում ներդրված հանրային ծառայության միանական համակարգի առավելություններից է այն, որ այստեղ բարձրանում է կառավարման արդյունավետությունը, քանի որ այն բերում է վարչական ծախսերի նվազեցմանը և ռեսուրսների օգտագործման բարելավմանը:

Այսպիսով, տվյալ բնագավառում կատարված ուսումնասիրությունները թույլ են տայս հանգել այնպիսի եզրակացությունների, որոնք, համադրելով ՀՀ իրականության հետ, կարելի է նախանշել զարգացման որոշակի միտումներ: Եվոռպական երկրների հետ համեմատած՝ Հայաստանի Հանրապետությունում համայնքային ծառայության համակարգի կիրառումն ունի և ընդհանրություններ և տարբերություններ: Մեզանում առավել խիստ են տարանջատված քաղաքացիական և համայնքային ծառայությունների իրավական հիմքերը: Այսուհանդերձ պետք է նշել, որ ՀՀ կառավարման համակարգն ունի ապակենտրոնացման բարձր մակարդակ ունեցող երկրներին բնորոշ հանրային ծառայության տարանջատված համակարգ՝ որոշակի ընդգծված առանձնահատկություններով և հատկանիշներով, որոնց մասին կարելի է պատկերացում կազմել՝ քննարկելով Հայաստանի Հանրապետությունում տարածքային զարգացման կառավարման դրսևորումները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Richardson, H.W., 1999, Regional Economics: Location Theory, Urban Structure and Regional Change, London
2. G. Gorrelak and Kuklinski (eds) Dilemmas of Regional Policies in Eastern and Central Europe, Warsaw: University of Warsaw, 1999
3. Horváth T.M. (1997) Decentralization in public administration
4. Managing across Levels of government: France, Oecd, 1997
5. Horvath G. (1995) The regional policy of the transition in Hungary, European Spatial Research and Policy
6. Kara, J. (2000) "New regional policy"
7. Համայնքային ծառայության հիմունքներ, Ուսումնական ձեռնարկ, Է. Օրդյանի խմբ. «Օր-դար», Երևան, 2009
8. Public management profile of Central and Eastern European countries Bulgaria, OECD, SIGMA, 1999
9. Է. Օրդյան, «Ապակենտրոնացում», Հայեցակարգային հիմնադրույթներ, «Օր-դար», Երևան, 2007
10. Public management profiles of central and Eastern European countries: Lithuania, OESD, SIGMA, 1999
11. <http://epp.eurostat.ec.europa.eu>

INTERNATIONAL EXPERIENCE OF REGIONAL GOVERNANCE OF SOCIO-ECONOMIC DEVELOPMENT

HARUTYUNYAN HARUTYUN

PhD in Economics, Associate Professor

ANAU, GSU Lecturer

e-mail: hpah@mail.ru

PAHLAVUNI ARMEN

HSBC Bank Manager

e-mail: armen.pahlavuni@hsbc.com

The article presents the mechanisms used in countries where the experience in managing regional socio-economic development is of greatest interest. These mechanisms may also have useful applications in the Republic of Armenia. In particular, the experience of the advanced states of the European Union (France, Germany) in eliminating the uneven development of individual regions of the countries, as well as that of the post-socialist countries (the Czech Republic, Bulgaria, Poland) and the former republics of the Soviet Union (the Russian Federation, Latvia) is acceptable. Their experience is also accepted for Armenia by

the fact that in these countries centralized and local government is regulated by the same methods as in the RA.

Key words: *Territorial administration, socio-economic development, territorial policy.*

МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ УПРАВЛЕНИЯ ТЕРРИТОРИАЛЬНЫМ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИМ РАЗВИТИЕМ

АРУТЮНЯН АРУТЮН

Кандидат экономических наук, доцент,

Преподаватель ANAY, ГГУ

электронная почта: hrah@mail.ru

ПАХЛАВУНИ АРМЕН

Менеджер банка HSBC

электронная почта: armen.pahlavuni@hsbc.com

В статье представлены механизмы, применяемые в странах, чей опыт управления региональным социально-экономическим развитием представляет наибольший интерес. Эти механизмы могут также иметь полезное применение в Республике Армении. В частности, приемлем определенный опыт передовых государств Евросоюза (Франция, Германия) по ликвидации неравномерного развития отдельных регионов стран, а также стран постсоциалистического лагеря (Чехия, Болгария, Польша) и бывших республик Советского Союза (Российская федерация, Латвия). Их опыт для Армении приемлем также тем, что в этих странах централизованное и местное управление регулируются такими методами, что в РА.

Ключевые слова: *территориальное управление, социально-экономическое развитие, территориальная политика.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 19.08.2021թ.:

Հոդվածը գրախոսվել է 23.10.2021թ.: